ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«13 հունվարի» 2016 թվականի № 02-Ա

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՖՈՆԴ» ՊՈԱԿ 01.01.2015-31.12.2015ԹԹ. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգով, ՀՀ կառավարության 2015թ. Հունվարի 30-ի N 105-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգով, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ներքին աուդիտի գործունեության կանոնակարգի և ներքին աուդիտի ռիսկերի որոշման չափորոշիչները հաստատելու մասին» 15.07.2015թ. N 330-Ա և «ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի 2016-2018թթ. ռազմավարական և 2016 թվականի տարեկան ծրագրերը հաստատելու մասին» 22.12.2015 թվականի N 571-Ա հրամանների պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1.Նախարարության աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Արմեն Խաչատրյանին, գլխավոր մասնագետ Վահան Մարգարյանին և առաջատար մասնագետ Հեղինե Կարապետյանին սույն թվականի հունվարի 18-ից մինչև հունվարի 22-ը իրականացնել «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ 01.01.2015-31.12.2015թթ. գնումների համապատասխանության աուդիտ:

2.Աուդիտի արդյունքները ներկայացնել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարին՝ աուդիտի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

3.Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

Ե. ԶԱԽԱՐՅԱՆ